

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Ց. Ա. ՃՈՐՈՒՑԱՆ

Արևելյան Եվրոպայում և նախկին Խորհրդային Միությունում կոմունիզմի վախճանն առաջացրեց ազատականացման, ժողովրդավարացման, ինչպես նաև ազգայնականացման նոր ալիք: Ըստ վերլուծաբանների կարծիքով՝ ազգայնականությունը և ժողովրդավարությունն իրենցից ներկայացնում են փոխբացառող սկզբունքներ, որոշների կարծիքով՝ կարելի է տեսնել նրանց կապող որոշակի դրական օղակներ, մյուսները շեշտում են, որ այս երկուսը փոխալայնմանավորում, փոխկապակցում, հավասարակշռում և հակակշռում են միմյանց: Հակակոմունիստական հեղափոխություններն ըստ էության ստիպեցին մասնագետներին վերախմաստավորելու այս երկու երևույթների՝ ազգայնականության և ժողովրդավարության փոխհարաբերությունը ներկա դարաշրջանում:

Թերևս առաջին մեծ փորձը պատկանում է Ֆ.Ֆուկույամային: «Պատմության ավարտը և վերջին մարդը» գրքում նա նկատում է, որ կոմունիզմի անկմամբ ազատական-ժողովրդավարական գաղափարները մնացին առանց իրական հակակշռի՝ մրցակից-գաղափարի¹, այսինքն՝ հետպատմական այս ժամանակաշրջանում ազատական ժողովրդավարությանը որևէ գաղափարական վտանգ չի սպառնում: Հեղինակն ազգայնականությունը վերագրում է բացասական դեր, որը, սակայն, ազատական ժողովրդավարությանը շնորհեց երկար սպասված հաղթանակը: Փաստորեն մեկի հաղթանակը պայմանավորվում է միմիայն մյուսի պարտությամբ, և դրանով այդ երկու երևույթներին տրվում է խիստ մերժելի գնահատական: Սակայն որոշ հեղինակներ կոմունիզմի ժառանգորդ են համարում նույնիսկ ոչ թե ժողովրդավարությունը, այլ ազգայնականությունը, ինչը մշանակում է, որ պատմությունը շարունակվում է:

Համաձայն Ֆուկույամայի տեսության՝ ազգայնականությունը մեզալոտիա է (ոմանց տրվում են առավել իրավունքներ մյուսների համեմատությամբ), այն դեպքում, երբ ազատական ժողովրդավարությունը սահմանվում է որպես իզոտիա (բոլորի համար սահմանում են հավասար իրավունքներ): Ազգայնականությունը, նրա կարծիքով, պահանջում է «ընդունել միայն տվյալ ազգի կամ էթնիկ խմբի անդամների իրավունքները»²:

Իրականում պահանջվում է միայն ճանաչել տվյալ ազգը որպես մեկ ամբողջություն, որը կունենա անկախ պետություն և իրավահավասար անդամություն «ժողովուրդների միասնական ընտանիքում»: Այսինքն՝ ազգայնականության հիմնային գաղափարները ոչ պակաս իզոտիա են, քան ազատական ժողովրդավարությանը, չնայած ազգերը, ինչպես անհատները, առանձին դեպքերում կարող են հանդես գալ որպես մեզալոտիա:

Ըստ իս, ազգայնականության գաղափարը նույնիսկ տեսականորեն անհնար է պատկերացնել առանց ժողովրդավարության, և որ վերջինս (ժամանակակից իմաստով) երբեք գոյություն չի ունեցել առանց ազգայնականության: Ե՛վ ազգայնականությունը, և՛ ժողովրդավարությունը միևնույն հիմնաքարային պատմական հասկացության՝ ժողովրդի ինքնիշխանության գաղափարի սերուցք են, չնայած տարբեր կերպ են դրսևորվում կայացած և դրան ձգտող, ինչպես նաև տնաբույծ և ներմուծված ժողովրդավարական պետություններում:

¹ Sb'u Francis Fukuyama, *The End of History and the Last Man*, New York, Free Press, 1992:

² Տե՛ս նույն տեղը, էջ 182:

Ժողովրդավարության հիմքը ժողովրդի իշխանության սկզբունքն է, ըստ որի՝ կառավարությունը լեգիտիմացվում է միայն նրանց կամքով, ում ղեկավարում է: Ժողովրդավարությունը համարվում է կառավարման ուսցիտնալ մոդել, որի շնորհիվ ազատ անհատները նպատակաուղղվում են իրենց շահերի իրագործմանը: Հետևաբար այն, ինչ համարվում է համեմատաբար ոչ ուսցիտնալ, դիտվում է որպես ժողովրդավարական գաղափարներին հակասող երևույթ: Ազգայնականությունը իռացիոնալ ֆեոմոնենի մի օրինակ է, որը ենթադրաբար տարբեր վերլուծաբանների կողմից դիտվում է որպես խաչընդոտ ժողովրդավարության նվաճումների ճանապարհին:

Համոզվելու համար, որ այնպիսի իռացիոնալ երևույթ, ինչպիսին ազգայնականությունն է, կարող է կենսական անհրաժեշտություն ներկայացնել ուսցիտնալ ժողովրդավարության համար, համեմատենք այդ համակարգը խաղի հետ: Ժողովրդավարությունը, ինչպես և ցանկացած խաղ, ունի իր կանոնները՝ օրենքները: Սակայն, բացի կանոններից, ժողովրդավարությունը ենթադրում է խաղացողներ և խաղահրապարակ: Խաղում այն բավական պայմանական է և պատահական, իսկ ժողովրդավարության օրենքները արդյունք են միայն քաղաքական գործիչների կոնսենսուսի: Ժողովրդավարությունը, իհարկե, ունի հստակ չափորոշիչներ խաղացողների կազմի և հրապարակի որոշման համար, սակայն չի կարող բացատրել, թե ինչու քաղաքացիների տվյալ խումբը կամ տվյալ տարածքը պետք է (կամ հակառակը՝ չպետք է) ներառվեն մեկ այլ խոշոր քաղաքական միավորման մեջ: Փաստորեն, ազգայնականությունն այն պատմական ուժն է, որն օգնում է մեկնաբանել որոշակի մարդկանց կողմից բնակեցված տարածքի և քաղաքական միավորի համապատասխանության արդարացիությունը:

Ավանդական եվրոպական ազգայնականությունը փորձում էր գտնել համընդհանուր իդեալական չափորոշիչներ, որոնք հնարավոր կդարձնեին տարածքների արդար բաժանումը ժողովրդիների միջև: Սակայն ազգայնականության իրական պատմությունը ցույց տվեց, որ օբյեկտիվ և համընդհանուր չափորոշիչներ իրականում անհասանելի են³: Էթնիկ հումքից ազգի գոյացումը մշտապես ուղեկցվել է պատմական կատակլիզմներով և քաղաքական գործիչների կանխամտածված գործողություններով: Աշխարհում ուղղակի գոյություն չունեն Աստծո կողմից տրված կամ բնական զարգացմամբ կանխորոշված ազգային սահմաններ:

Ժամանակակից ժողովրդավարական վարչակարգերը, ինչպես և ժամանակակից ազգերի մեծ մասը, իրենցից ներկայացնում են «արհեստական» կառույցներ: Եվերերը իր «Գյուղացիների վերածումը ֆրանսիացիների» գրքում ընդգծում է, որ ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում (երբ առաջացավ ֆրանսիացի ազգը) գյուղացիներից քչերն էին իրենց համարում ֆրանսիացիներ նախ այն պատճառով, որ նույնիսկ չէին խոսում ֆրանսերեն⁴:

Ինտեգրացիան կենտրոնացված պետական բյուրոկրատիայի, մշակութային վերնախավի և այլ մարմինների կողմից նախօրոք պլանավորված քաղաքական գործունեության արդյունք էր, որը հիմք է տալիս պնդելու, որ ֆրանսիական ազգը ավելի շատ «արհեստական», քան «բնական» կառույց էր⁵:

Ժողովրդավարության կայացումը մեծապես կապված է էթնիկ հանրույթից ազգի ձևավորման հետ: Ավելին՝ է. Գելները նշում է, որ ժողովրդավարական գործընթացներն են ծնել ազգերը⁶: Ահա այս պատճառով է, որ նոր ձևավորվող ժողովրդավարություններում հաճախ հանրնկնում են հանուն անկախության և ժողովրդավարության ձևավորված շարժումները. երկուսն էլ ձգտում են ինքնորոշման: Այս փաստարկն իմաստավորվում է թերևս

³ Տե՛ս Ernest Gellner, Nations and Nationalism, Ithaca: Cornell University Press, 1983:

⁴ Տե՛ս Eugen J. Weber, Peasants into Frenchmen: The Modernization of Rural France 1870-1914, Stanford University Press, 1976:

⁵ Տե՛ս Erik J. Hobsbawm, Nations and Nationalism since 1870: Programme, Myth, Reality, Cambridge University Press, 1990:

⁶ Տե՛ս նույն տեղը:

նորածին ժողովրդավարության ղեկավարում, որտեղ ազգայնականությունն իր հերթին անհրաժեշտ է ժողովրդավարական մեխանիզմը գործի գցելու համար: Սակայն երբ ժողովրդավարությունները սկսում են կայանալ սեփական սահմաններում, ազգային զգացմունքների ինտենսիվությունն ու կարևորությունն աստիճանաբար մկազում են:

1945թ. ի վեր ազգայնականությունը համարվում է բացասական հասկացություն: Նրա հետ են ասոցիացվում այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ագրեսիան, իմպերիալիզմը, իռացիոնալիզմը, անհանդուրժողականությունը, բռնությունը և այլն: Ներկա ժամանակաշրջանում ազգայնականությունը հակադրվում է ժողովրդավարությանը և ընդունվում որպես շովինիզմի մեղմ տարբերակ:

Ժամանակակից գիտական շրջանակներում «ազգայնականություն» հասկացությունն ունի տարբեր նշանակություններ: Քաղաքական ենթատեքստից ելնելով՝ ազգայնականություն ասելով հասկանում են.

- ◆ ազգային իմպերիալիզմ, որն ըստ էության հակաժողովրդավարական է, քանի որ անտեսում է գրավյալ ազգերի կամ այլ ազգային խմբերի կողմից արտահայտված ենթադրյալ կամքը,

- ◆ ընդդիմություն ինտեգրացիային (քաղաքացիական ազգայնականություն),

- ◆ էթնիկ արտոնությունների պահանջ (էթնիկ ազգայնականություն),

- ◆ մերզադրի սահմանափակում (քաղաքացիական ազգայնականություն՝ ուժեղ արտահայտված էթնիկ բաղադրիչի ուղեկցությամբ),

- ◆ ձգտում՝ ուղղված ազգային պետության ձևավորմանը: Ազգայնականությունն այստեղ դրսևորվում է որպես որոշակի ազգի կողմից բնակեցված տարածքի և պետական տարածքի համապատասխանեցման փորձ: Այս ազգայնականությունն ըստ էության խընդրի առանցք է, որի հետ են կապված ազգայնականության մյուս բոլոր դրսևորումները:

Անցումը տոհմային ինքնիշխանությունից ազգային ինքնիշխանության, այսինքն՝ սեփական ազգի առանձնացումը մյուսներից, իրականացվում է երկու չափանիշներով՝ էթնիկ և պետական: Օտարները յուրայիններից բաժանվում են կամ էթնիկ (հատկապես՝ լեզվական), կամ պետական-քաղաքական սահմանով:

ԱՄՆ-ում և Ֆրանսիայում առաջին հանրապետական ազգերի ձևավորման հեղափոխական գործողություններից հետո ազգային ինքնիշխանության գաղափարը թևածուռ է ամբողջ երկրագնդով մեկ: Այսօր գրեթե բոլոր պետությունները լեգիտիմացվում են համաժողովրդական կամքի արտահայտմամբ: Կամքի այդպիսի արտահայտումը հաճախ անվանում են ժողովրդավարական, սակայն ավելի ճիշտ կլիներ այն սահմանել որպես ժողովրդական: Այսօր առկա են պոպուլիստական, ավտորիտար կամ բռնապետական վարչակարգեր, որոնք մերժում են մարդկանց և քաղաքացիների հիմնական իրավունքներն ու ազատությունները, իշխանությունների բաժանումը, քաղաքական բազմազանությունը, սակայն ինքնալեգիտիմացվում են հանրաքվեների կամ կեղծ (կվազի) հանրաքվեների ոչ ժողովրդավարական միջոցներով: Ժողովրդական կամքը սահմանափակվում է այլազգիների տիրապետությունից ազատագրմամբ, ինչն ինքնըստինքյան չի ենթադրում ներքին ազատություն՝ ազատագրում սեփական ազգին պատկանող ավտորիտար կամ բռնապետական իշխանավորներից:

Դեռևս ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում ֆրանսիական ազգը չէր ընդունվում որպես առանց բացառության բոլոր ազատ քաղաքացիների միասություն ցանկացած չափի պետության մեջ, այլ առավելապես ֆրանսախոս ազգ, որը փորձում էր համապատասխանեցնել պետական սահմանները բնականի հետ՝ ձգվելով մինչև Պիրենեյներ և Հռենոս: Ներկայումս էթնաազգային շարժումները մպատակառոդված են բազմազգ պետությունների տարրալուծմանը կամ մասնակի ազգային պետությունների միավորմանը՝

¹ Տե՛ս Ян Эгберт, Демократия и национализм: Единство или противоречие?, Полис, 1996, № 1:

ստեղծելու համար էքնիկ ազգային-պետություն՝ իրենց ձգտումներն արդարացնելով էքնիկ խմբերի «քնական» իրավունքով: Սակայն ազատությունը և հավասարությունը ազգ-պետություններում երբեք չեն վերաբերել լեզվին, քանի որ միշտ առկա է լեզվակիրը, որը ձգտում է սեփական լեզուն վերածել պետականի: Նույնիսկ ժողովրդավարությունն է ենթադրում էքնոկրատիա (էքնոսի իշխանություն)՝ մեկ էքնոագգի տիրապետությունը մյուս էքնիկ և ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Էքնոագգայնականությանը հատուկ են սոցիալական, ժողովրդավարական և հանրապետական գծեր: Սակայն, ինչպես պետական ազգայնականությունը, այն հաճախ դառնում է պոպուլիստական կամ կվազիպլեբիսցիտար (կեղծ հանրաքվեական) և նույնիսկ իմպերիալիստական: Էքնոկրատական միտումները հատկապես կենսագործվում են, երբ տիտղոսակիր ազգը կազմում է բնակչության փոքրամասնությունը կամ ոչ զգալի մեծամասնությունը և, հետևաբար, չի կարող հենվել տնտեսապես գերիշխող մեծամասնության վրա, ինչը ստիպում է իշխանություններին ճնշել ժողովրդավարական բազմազանությունը:

Պլեբիսցիտար ազգայնականությունը ազգայնականության միակ ձևն է, որը հնարավորություն է տալիս ժողովրդավարական ճանապարհով ստեղծել պահպանել և բարեփոխել պետությունը: Ի տարբերություն պետական և էքնիկ ազգայնականությունների՝ պլեբիսցիտար ազգայնականությունը յուրաքանչյուրի համար պայմաններ է ստեղծում ազատորեն ընտրելու պատկանելությունը որևէ ազգի և նույնիսկ ձևավորելու պետական սահմանները կամ փոփոխելու դրանք ըստ սեփական հայեցողության: Այն իրավունք է տալիս ընտրություն կատարելու ազգային ծնունդի և ազգային ապագայի միջև:

Բրիտանացի ազգայնագետ Լ. Ակտոնը նշում է, որ «մեծ ժողովրդի ժողովրդավարական համակարգը կամ պետք է ինքնակառավարումը զոհի հանուն միասնության, կամ պահպանի այն ֆեդերալիզմի օգնությամբ»⁸: Այս հեղինակը վերլուծության է ենթարկում ազգայնականության սկզբունքները և տարբերակում դրա երկու դրսևորում՝ «ազգի միասնականացում» և «ազգային ազատագրում»: Առաջինը գետեղում է ժողովրդավարական գաղափարներին հատուկ դաշտում, որտեղ այն ասոցիացվում է հավաքական կամքի դրսևորման, ունիֆիկացիայի և նույնիսկ դեսպոտիզմի հետ, ըստ որի՝ հանուն միասնության զոհում են «քնական» իրավունքները: Իսկ «ազգային ազատագրմանը» վերագրվում է ազատական բնույթ, որը ենթադրում է ազատություն, բազմազանություն, ներդաշնակություն: Ըստ Ակտոնի՝ մի քանի ազգերի գոյությունը պետությունում ազատության և՛ վկայականն է, և՛ գրավականը: Թույլ և մեղմող ազգերը, ընդհանուր կառավարման ներքո ուժեղների և երիտասարդների հետ շփվելով, նոր կյանք են ստանում: Արդյունքում շահում են քաղաքակրթությունը, մարդկությունը և կրոնը⁹:

Այս թեզին կարելի է հակադրել Մանհայնի համալսարանի պրոֆեսոր Յան Էգերտի մտքերը նման հասարակություններում խտրականության անխուսափելիության վերաբերյալ: Ըստ նրա՝ ցանկացած պետություն ունի իր պաշտոնական լեզուն, և գրեթե ցանկացած երկրում առկա են լեզվական փոքրամասնություններ: Նույնիսկ օրինակելի ժողովրդավարության պայմաններում, երբ բոլոր քաղաքացիները հավասար իրավունքներով օգտվում են ազատություններից և իրավունքներից, գոյություն ունի մի իրավունք, որից չի կարող լիարժեքորեն օգտվել յուրաքանչյուրը: Խոսքը մայրենի լեզվով խոսելու դեպքում հասկացված լինելու իրավունքի մասին է: Քանի որ ոչ մի երկրում, որքան էլ ժողովրդավարական լինի այն, պետական ծառայողները չեն կարող տիրապետել բոլոր այն լեզուներին, որոնք մայրենի են համարվում տվյալ պետության յուրաքանչյուր քաղաքացու համար, իսկ նրանք, ովքեր լավ չեն տիրապետում պետության պաշտոնական լեզվին, չեն կարող իրականացնել պետական ծառայողի գործառնություններ, հետևաբար այդ ժողովրդավարական պետությունում անառարկելիորեն առկա են էքնոկրատական գծեր: Այսպիսի դեպքերում ժողովրդավարությունն իրավիճակը մեղմում է երկու փոխլրացնող միջոցներով.

⁸ Տե՛ս Lord Acton, Принцип национального самоопределения. Нации и Национализм, М., 2002, էջ 32:

⁹ Տե՛ս նույն տեղը:

քիչ տարածված լեզուներին և նրանցով խոսող մարդկանց ու քաղաքացիներին արտոնությունների տրամադրմամբ և էթնիկ փոքրամասնությունների շրջանում երկրում տիրապետող լեզվի ուսուցման խրախուսմամբ, ընդ որում, վերջինն ընդունվում է փոքրամասնությունների կողմից այն դեպքում, երբ այն չի կապվում ձուլման (ասիմիլիացիայի) մտադրությունների հետ¹⁰:

Ինչպես արդեն նշել ենք, ոչ մի ժողովրդավարություն չի կարող գոյություն ունենալ առանց ազգայնականության, որը կոչված է բացատրելու, թե ինչու որևէ մեկը տվյալ պետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ ոչ: Ժողովրդավարական գաղափարախոսությունը հենվում է քաղաքացիների ազատության և հավասարության սկզբունքի վրա և ճանաչում է պետության տարածքում բնակվող օտարերկրացիների համընդհանուր իրավունքները: Սակայն ցանկացած ժողովրդավարական երկրում, որպես կանոն, առկա է պետությանն աջակցող որոշակի մեծամասնություն և առանց համաձայնության պետության կազմ ենթարկված փոքրամասնություն, որն իրավունք ունի իր կողմից զբաղեցված տարածքը միացնել այլ պետության կամ ձևավորել սեփական պետությունը:

Այսօր աշխարհում գոյություն ունի ընդամենը 12 երկիր, որտեղ քաղաքացիների 90%-ից ավելին պատկանում է միևնույն էթնոսին, ինչպես նաև տվյալ էթնոսի ներկայացուցիչների 90%-ից ավելին ապրում է մեկ պետության տարածքում: Կարելի է եզրակացնել, որ գրեթե ոչ մի պետության մեջ ժողովուրդը և էթնոսը նույնական չեն¹¹:

Ազգային իմպերիալիզմը ժողովրդավարական լինելու համար կարող է ճնշել ազգային ինքնորոշումը միայն այնքան ժամանակ, որքան սեփական միաէթնիկ կամ բազմէթնիկ ազգը կկազմի մեծամասնություն: Սակայն հարաբերակցության նույնիսկ թեթևակի փոփոխությունը առաջ է բերում ազգային առճակատման խնդիրներ, որոնց լուծման համար ժողովրդավարությունն առաջարկում է յուրահատուկ միջոցներ:

Սահմանային հավաքական ազգային տարածքային շրջանների առկայության դեպքում ժողովրդավարական քաղաքականության տարբերակներից մեկը կարող է լինել նոր ազգային պետության հիմնումը: Սակայն հաշվի առնենք, որ ազգային անկախություն նշանակում է ոչ ավելի, քան ընտրություն մեկ կամ մի քանի պետություններից տնտեսական և քաղաքական կախվածության: Այն, ինչի չի հաջողվել հասնել պետության ներսում և մասնավորապես միջէթնիկ համագործակցությանը, այժմ արդեն պետք է իրականացվի միջազգային համագործակցության արդյունքում, նույնիսկ եթե այն վտանգ է պարունակում թուլացնել սեփական ազգը և քայքայել ազգ-պետությունը:

Անկախ ազգ-պետության ստեղծման այլընտրանք է հանդիսանում ազգային ենթապետության ձևավորումը՝ մեծ կամ փոքր ինքնավարության աստիճանով, որը շատ դեպքերում գործնականում չի տարբերվում ինքնիշխանությունից: Ի տարբերություն բազմազգ (Բելգիա) կամ բազմէթնիկ (Շվեյցարիա) պետությունների, որտեղ բացակայում է որևէ էթնոազգի ինչպես իրավական, այնպես էլ փաստացի գերիշխանությունը, խոսքն այստեղ խառնածին (հիբրիդ) ազգ-պետության ձևավորման մասին է:

Այն պետություններում, որտեղ կղզային կամ ոչ հավաքական էթնիկ փոքրամասնությունների իրավիճակը հնարավորություն չի տալիս ստեղծել ո՛չ ազգ-պետություն, ո՛չ ինքնավար ենթապետություն, կարող են իրագործվել ապատարածքային ինքնավարության մեխանիզմները (այս գաղափարն առաջին անգամ սահմանել են ավստրիացի սոցիալ-ժողովրդավարները): Ապատարածքային այս մոդելը ենթադրում է լեզվական ազգի հիմնում՝ որպես անհատ անձանց քաղաքական և հասարակական-իրավաբանական միություն:

Ազգային խնդիրների լուծումների առաջարկման հակադիր բևեռում է գտնվում բոնապետական էթնոկրատիան, որը սկզբունքորեն ձգտում է զրկել այլ ազգերին գոյության իրավունքից: Այսպես, XIX դարից սկսած թուրքական իշխանությունները դեմ էին հայերի

¹⁰ Տե՛ս ՅՈՒՆԵՍԿՕ, նշվ. աշխ.:

¹¹ Տե՛ս "The New York Times' World Almanach 2004", New York, 2004, էջ 37:

գոյությանը և փորձում էին ֆիզիկապես ոչնչացնել ազգի յուրաքանչյուր մերկայացուցչի, այլ ոչ թե իրականացնել ձուլման քաղաքականություն, այնպես, ինչպես գերմանական մացիոնալ-սոցիալիզմը վերաբերվում էր հրեաներին երկրորդ աշխարհամարտի տարիներին:

Ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական էթնոկրատիաների միջանկյալ դիրքում են այն պետությունները, որոնք բոլոր քաղաքացիներին երաշխավորում են հավասար իրավունքներ, սակայն իրենց նպատակ են հայտարարում ոչ թե պետական, այլ տիտղոսակիր ազգի ինքնակառավարումը: Այս տարբերակի օրինակ է Սլովակիայի Հանրապետությունը, որի խորհրդարանը նպատակահարմար է համարել նոր սահմանադրության պրեամբուլայի (ներածության) հետևյալ ձևակերպումը. «Մենք՝ սլովակյան ժողովուրդս...» և ոչ «Մենք՝ Սլովակիայի Հանրապետության քաղաքացիներս...»¹²: Տարբերությունն այն է, թե արդյոք էթնոկրատիան սահմանված է սահմանադրորեն, թե իրականում գործում է որպես պետության քաղաքացիների հավասարության խաթկանք:

Ինչպես ազգային, այնպես էլ ժամանակակից միջազգային հանրությանը հուզող այն խնդիրները, որոնց լուծումը դժվար է գտնել ազգային պետությունների մակարդակում՝ անկախ կառավարման ձևից, կարող են առաջարկել վերազգային կառույցները, որոնց դերն աստիճանաբար ընդլայնվելով՝ սկսում է ներառել ավելի և ավելի շատ ազգ-պետության գործառույթներ: Ազգ-պետությունը հետզհետե կորցնում է տնտեսական և ռազմական անվտանգության երաշխավորի իր դերը՝ փոխանցելով այն վերազգային հաստատությունների, որն իր հերթին կարող է լրացվել նրա էթնիկ-լեզվական, մշակութային, ինչպես նաև սոցիալական գործառույթների ուժեղացմամբ: 1900թ. աշխարհի քաղաքական քարտեզին առկա էր 80 պետություն, այսօր դրանք 190-ից ավելի են, իսկ որոշ ժամանակ անց դրանք միգուցե կրկնապատկեն: Եվրոպայում «Ընդլայնված Եվրամիության» շրջանակներում վերազգային ինտեգրացիայի խորացմամբ կարող ենք ակնատես լինել պատմության մեջ առաջին անգամ ինտեգրացիայի բարձր աստիճան ունեցող համադաշնության մեջ նմանալ ազգ-պետությունների ընկերակցության, խառնածին էթնոազգային պետությունների միավորման: XXI դարի մարդկանց, ըստ երևույթին, վիճակված է գործունենալ ազգայնականության 4 տեսակի հետ՝ կայացած ազգերի ավանդական պետական ազգայնականություն, եվրոպական, միգուցե և այլ վերազգերի մակրոտարածքային, մայրցամաքային վերազգայնականություն, թույլ ազգերի միկրոտարածքային ենթաազգայնականություն և, ի վերջո, ոչ հավաքական ա կղզային էթնիկ փոքրամասնությունների ապատարածքային ազգայնականություն:

Ամփոփելով, մեկ անգամ ևս նշենք, որ ազգայնականությունը և ժողովրդավարությունը ժողովրդական ինքնիշխանության երկու զավակներն են, որոնց միջև գոյություն չունի էական հակասություն, և որոնք, այնուամենայնիվ, իրենցից չեն մերկայացնում կատարյալ միասնություն առանց որևէ հակասության: Նրանք կարիք ունեն քաղաքական և իրավական գիտակցական փոխզիջման, որն ամեն անգամ և ամեն կոնկրետ դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել զրոյական վիճակից:

T. A. ЧОРОХЯН - Национализм и демократия. - Статья посвящена исследованию взаимоотношений между проявлениями этих двух понятий. На первый взгляд кажется, что демократия как высокорациональная модель противоречит национализму, одному из примеров иррационального феномена, но при глубинном исследовании становится ясно, что эти два явления оказываются близнецами и не могут существовать друг без друга. И национализм, и демократия - производные одной и той же фундаментальной исторической идеи, а именно: идеи о суверенитете народа.

¹² Տե՛ս www.veacc.com/constitution/slovakia-constitution-eng.html ինտերֆեյսային էջ: